Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
փետրվարի 27-ի N 197-Ն որոշման

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

ԾՐԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ.
ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԴՐՎԱԾ ԱՐԵՎԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ
ԾՐԱԳԻՐ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 06 ԲԱԺԻՆ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 04 ԽՈՒՄԲ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 01 ԴԱՍ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքի նկարագրությունը 3
Իրավիճակի վերլուծություն 4
Ծրագրի ընդհանուր նպատակը 4
Ծրագրի իրավական հիմքերը.....5
Ծրագրի շահառուները և մատուցվող ծառայությունները 5-6
Ծրագրի խնդիրները և դրանց կապը ծրագրի նպատակի հետ 6
Ծրագրի կառուցվածքը (միջոցառումները) և իրականացման եղանակը...6
Ակնկալվող արդյունքները..... 6-7
Ծրագրի գնահատման չափանիշները 7
Հավելված N 1 8-9

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հ Լոռու մարզի Շնող համայնքը խոշորացված համայնք է՝ կազմված 3 բնակավայրերից՝ Շնող, Թեղուտ, քարկոփ: Շնող համայնքի *Շնող* գյուղի պատմությունը սերտորեն առնչվում է Կայծոն ամրոցի հետ/10-11 դդ./: Կայծոն-Շնող անվանափոխությունը կատարվել է18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին: Շնողցիների եկամտի հիմնական աղբյուրը հանդիսացել է բազմատարր գյուղատնտեսությունը: Պապենական ճյուղերն են եղել այգեգործությունը, անասնապահությունը, բանջարաբոստանային կուլտուրաների մշակումը, թռչնապահությունը, շերամապահությունը:

Շնող համայնքի *Թեղուտ* գյուղը հիմնադրվել է հարևան Շնող գյուղի բնակիչների կողմից 20-րդ դարի սկզբին: Բնակիչների նախնիները մասամբ բնիկ լոռեցի են, մասամբ տեղափոխվել են Սյունիքի, Ջավախքի,Արցախի տարածաշրջաններից, Սևանի ավազանից՝ 17-18-րդ դդ.: Գյուղի անունը կապված է ներկայիս գյուղի կենտրոնական մասում գտնվող հին Թեղուտ գյուղի հետ, որը թալանվել է լեզգիների կողմից, իսկ բնիկ բնակչությունը ոչնչացվել է և գերեվարվել:

Շնող համայնքի *Քարկոփ գյուղը*, որը խորհրդային տարիներին ուներ ավանի կարգավիճակ, հանրությանը հայտնի է ավելի շատ «Շեբզավոդ» (ռուս.՝ Шебзавод) անվամբ, որը գալիս է խորհրդային տարիներին Քարկոփին տրված ռուսերեն անունից: Անկախացումից հետո Շեբզավոդը թարգմանվեց բառացի և դարձավ «Քարկոփ»: Բնակավայրը հիմնադրվել է 1930-ականներին՝ բնակավայրին կից գտնվող բազալտի և գրանիտի վերամշակմամբ զբաղվող գործարանի շուրջ:

Շնող համայնքը գտնվում է Գուգարաց լեռնաշղթայի արևելյան մասում՝ Դեբեդ գետի աջափնյա սարավանդի և հարակից ձորերով ու բլուրներով պատած բարդ ռելիեֆով տարածքի վրա: Վերջինս հյուսիս-արևմուտքից կտրվում է Դեբեդի կիրճով (գյուղին հարող մասում մինչև 200 մ խորությամբ): Կլիման բարեխառն է, չափավոր ու մեղմ ձմեռներով, մոտիկ է չոր արևադարձայինին: Տարեկան միջին ջերմաստիճանը 110 C°է, առավելագույնը՝ +38 C°, նվազագույնը՝ -22 C°, մթնոլորտային տեղումների տարեկան միջինը՝ 55 մմ :

Գլխավոր գետը սահմանակից Դեբեդն է՝ Շնող վտակով: Ծովի մակերևույթից բարձր է 670 մ-ով: Գյուղը շրջապատող անտառները հարուստ են արժեքավոր ծառատեսակներով, վայրի պտուղներով, հատապտուղներով, անասնակերով : Լեռնալանջերը, նախալեռնային տարածքները, գետահովիտները պատած են արգավանդ, բարեբեր հողատարածություններով:

Համայնքը տեղակայված է Դեբեդի վտակ Շնող գետի աջ ափին, Ալավերդի քաղաքից 18 կմ հեռավորության վրա՝ լեռնային անտառոտ վայրում:

1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Շնող խոշորացված համայնքում գործում է արևային էներգիայիով ինքնալիցքավորվող թվով 62 լուսատուներ, որոնք ապահովում են շուրջ 1,7 կմ ներհամայնքային փողոցների լուսավորությունը:

Համայնքում ներդրված բնական էներգակիրների անխափան աշխատանքի արդյունքում էլեկտրաէներգիայի խնայողությունն ամսական կազմում է շուրջ 62.000 ՀՀ դրամ՝ տարեկան կտրվածքով հասնելով շուրջ 750 հազար ՀՀ դրամի:

2.ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի ընդհանուր նպատակն է բարելավել ազդակիր Շնող համայնքի բնական միջավայրը, վերականգնել և ամրապնդել համայնքի բնակչության առողջությունը

Ծրագրի նպատակն է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն պետական բյուջեից, սուբվենցիաների տեսքով, Շնող համայնքին կատարվող մասհանումների գումարներով լուծել համայնքում առկա բնապահպանական և առողջապահական խնդիրները, այն է՝ արևի էներգիայի շնորհիվ ապահովել ներհամայնքային հնարավոր բոլոր ճանապարհների գիշերային լուսավորությունը, ինչը կնպաստի թե՛ համայնքային բյուջեի միջոցների խնայողությանը և այդպիսիք հրատապություն ներկայացնող այլ ոլորտներին ուղղելու, այնպես էլ կստեղծի բարեկեցիկ և ապահով պայմաններ՝ համայնքի բոլոր բնակիչների համար: Ծրագրի իրականացումը նպատակ է հետապնդում խնայել համայնքային բյուջեի միջոցները և դրանք ուղղել համայնքի բնակիչների առողջության պահպանման համար նախատեսվող ծրագրերի իրականացմանը՝ Շնողի բուժամբուլատորիայի համար անհրաժեշտ սարքավորումների ձոքբերմանը:

Ծրագիրը ներառում է.

1. Շնող համայնքի բնապահպանական և շրջակա միջավայրի պահպանության ու վերականգնման միջոցառումներ:
2. Համայնքի բնակչության առողջության պահպանմանը նպատակաուղղված միջոցառումներ

3.ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ծրագիրն ամբողջությամբ համապատասխանում է ,Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 12–րդ հոդվածով սահմանված համայնքի պարտադիր խնդիրների իրականացման օրենսդրական պահանջներին, համաձայն որոնց համայնքի գույքի կառավարումը (1–ին մաս 3–րդ կետ), համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը (1–ին մաս, կետ 6) համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումն ու շահագործումը (1–ին մաս 10–րդ կետ), ինչպես նաև համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը (1–ին մաս 14–րդ կետ) հանդիսանում են պարտադիր կատարման ենթակա ուղղություններ:

4. ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ ԵՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծրագրի առաջնային շահառու կհանդիսանան համայնքի 10–րդ, 11–րդ և 13–րդ փողոցների շուրջ 270 բնակիչներ, քանի որ ըստ արդեն իսկ հաստատված նախնական նախահաշվի համայնքը նախատեսում է հիշյալ փողոցներում տեղադրել ևս 36 լուսատուներ, որի արդյունքում ընդհանուր առմամբ կապահովվի ևս1 կմ երկարությամբ փողոցների լուսավորությունը:

Անկասկած ծրագրի ընդհանուր շահառու կհանդիսանան նաև համայնքի բոլոր բնակիչները, քանի որ ներհամայնքային փողոցների լուսավորությամբ առաջին հերթին ապահովվում է վերջիններիս սոցիալական պաշտպանվածությունն ու անվտանգությունը: Բացի այդ, էլեկտրաէներգիայի համար համայնքային բյուջեից կատարվող ծախսերի կրճատումը իրական հնարավորություն է ստեղծում խնայված միջոցներն ուղղել համայնքի բնակիչների առողջական,սոցիալական բարեկեցության բարձրացման այլ ուղղություններին:

5. ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՊԸ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏ

Ինչպես արդեն իսկ հիշատակվել է ծրագրի հիմնական խնդիրը **ազդակիր Շնող համայնքի բնական միջավայրի բարելավումը , ծրագրի իրականացման արդյունքում Շնող համայնքի բյուջեից խնայված միջոցները համայնքի բնակչության առողջությանն ուղղված միջոցառումներ իրականացնելը, նաև** համայնքի բնակիչների սոցիալական պաշտպանության բարձրացումն ու անվտանգության ապահովումն է:

Հարկ է նշել, որ բնական էներգակիր հանդիսացող արեգակի էներգիայի օգտագործմամբ կլուծվի նաև էկոլոգիապես անվնաս էներգիայի աղբյուրների կիրառելիության տարածականության ապահովումը, ինչն իր հերթին դրական ազդեցություն կթողնի շրջակա

միջավայի պահպանության վրա այն տրամաբանությամբ, որ էլեկտրական էներգիայի սնուցմամբ գործող արտաքին լուսավորության լուսատուների տեղադրման և շահագործման ընթացքում բավականին հաճախ առաջ են գալիս շրջակա միջավայրի բնականոն զարգացմանը միջամտող մարդկային գործոններ, որպիսիք արտահայտվում են էլեկտրական սնուցման հաղորդալարերի անցկացման կամ էլեկտրական լուսավորության սյուների տեղադրման համար ծառահատումների, հողածածկույթի ռելիեֆի արհեստական փոփոխության, ինչպես նաև ընթացիկ սպասարկման համար տեխնիկական միջոցների հարմարավետությունն ապահովող այլ պայմանների ստեղծմամբ:

6.ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ) ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Ծրագիրը հավանության արժանանալուց հետո, նախատեսվում է ըստ կազմված ծավալաթերթ–նախահաշվի հայտարարել մրցույթ և իրականացնել ևս 36 լուսատուների տեղադրման աշխատանքներ՝ ընդհանուր 4 717 200 ՀՀ դրամ արժողությամբ:

Հարկ է նշել, որ ներհամայնքային փողոցների արտաքին լուսավորության արդեն իսկ մեկնարկած ծրագիրը կրելու է շարունակական բնույթ և հիշյալ ծրագրի շրջանակներում խնայված համայնքային բյուջեի միջոցներն ուղղվելու են ծրագրի շարունակականության ապահովմանը:

7.ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի ամբողջական ներդրմամբ Շնող խոշորացված համայնքի ներհամայնքային նշանակության ևս 3 փողոցների շուրջ 1 կմ ճանապարհային հատված կապահովվի արտաքին լուսավորության բնական լուսատուներով, որի արդյունքում բնակիչների սոցիալական կյանքի բարկեցության բարձրացման և անվտանգության ապահովման երաշխիքներից բացի, համայնքային բյուջեն հնարավորություն կունենա էլեկտրաէներգիայի սպառման համար տարեկան կտրվածքով 750 հազար ՀՀ դրամի փոխարեն խնայել 1.200.000 ՀՀ դրամ գումար՝ դրանք ուղղելով բնական լուսատուներով ներհամայնքային փողոցների արտաքին լուսավորության համակարգի զարգացման և տարածականության ապահովման խնդիրների կատարմանը, ինչպես նաև Շնող համայնքում գործող բուժամբուլատորիայի համար այլընտրանքային էներգիայի աղբյուրի ձեռքբերման գործընթացին և նոր տեխնիկապես զարգացած սառնարանների ձեռքբերմանը: Վերջիններս խիստ կարևոր նշանակություն ունեն համայնքի համար, քանի որ համայնքի համար նախատեսված պատվաստանյութերը պետք է պահպանվեն հատուկ սառնարանային պայմաններում : Եվ քանի որ համայնքում հաճախ է լինում հոսանքազրկում,որի արդյունքում չեն գործում արդեն իսկ գոյություն ունեցող

սառնարանները, ապա նախատեսված պատվաստանյութերը հաճախ ստիպված են լինում ուղղակի ոչնչացնել:

8. ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ծրագրի գնահատման չափանիշ կարող է լինել՝

1.Փողոցային լուսավորության բարելավումը, վնասակար արտանետումների նվազեցումը, էներգիայի ծախսերի խնայողությունը:

2.Համայնքի բնակչության առողջական վիճակի պահպանումը, ամրապնդումը : Առաջարկվող ծրագիրն ընդգրկվել է ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի 2021թ. բնական միջավայրի պահպանման և բնակչության առողջության վերականգնման ծրագրի նախագծում՝ հաշվի առնելով դրանց բնապահպանական և առողջապահական ուղղվածությունը և այլ ֆինանսական աղբյուրների հաշվին /մասնավորապես համայնքային բյուջեի միջոցներով/ իրականացման դժվարությունը:

Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքը կլուսաբանվի համայնքապետարանի պաշտոնական կայքում, տեղական հեռուստատեսությամբ և զանգվածային լրատվության այլ միջոցներով:

Հավելված

ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԾՐԱԳԻՐ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԴՐՎԱԾ ԱՐԵՎԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ

	ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ	Համայնքի փողոցային լուսավորության արդիականացում, համայնքի բոլոր բնակիչների համար բարեկեցիկ պայմանների ապահովում , համայնքի բնակիչների առողջության պահպանման համար նախատեսվող ծրագրերի իրականացում	Փողոցային լուսատուների լուսատվության բարձրացում, համայնքի ներհամայնքային նշանակության 3 փողոցների շուրջ 1 կմ ճանապարհային հատվածի արտաքին լուսավորության բնական լուսատուներով ապահովում, բնակիչների սոցիալական կյանքի բարկեցության բարձրացում, Շնող համայնքում գործող բուժամբուլատորիայի համար այլընտրանքային էներգիայի աղբյուրի և նոր տեխնիկապես զարգացած սառնարանների ձեռքբերում
ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	Հին լուսատուների փոխարինում նոր էներգախնայող լուսատուներով, լուսասյուների տեղադրում, Շնող համայնքում գործող բուժամբուլատորիայի համար այլընտրանքային էներգիայի աղբյուրի և նոր տեխնիկապես զարգացած սառնարանների ձեռքբերում	Կապահովվի փողոցային բարձր լուսատվություն, ինչպես նաև կկատարվեն տնտեսումներ,որի արդյունքում Շնող համայնքում գործող բուժամբուլատորիայի համար ձեռք կբերվեն այլընտրանքային էներգիայի աղբյուրի միջոցներ և նոր տեխնիկապես զարգացած սառնարաններ

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	Կիրականացվեն Շնող համայնքի կարիքների համար էներգախնայող լուսատուների ձեռքբերման և տեղադրման աշխատանքներ,ինչպես նաև կկազմակերպվի Շնող համայնքում գործող բուժամբուլատորիայի համար այլընտրանքային էներգիայի աղբյուրի և նոր տեխնիկապես զարգացած սառնարանների ձեռքբերման գործընթացը Լուսավորության համակարգի տեղադրման, փոխարինման աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է 4 717 200 ՀՀ դրամ նախագծանախահաշվային աշխատանքների արժեքը՝ 350 000 ՀՀ դրամ(համայնքի կողմից վճարվել է արդեն իսկ):	Համայնքը կապահովվի նոր էներգախնայող LED ինքնալիցքավորվող լուսատուներով: Ծրագրի հավանության արժանանալու դեպքում համայնքի կողմից կհայտարարվի մրցույթ, հաղթող կազմակերպության հետ կկնքվի պայմանագիր, և աշխատանքները կիրականացվեն 2 ամսվա ընթացքում:

ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ